ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2020թ. թիվ 50-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1610-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված կարգը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակարանների գնման վկայագրերի միջոցով բնակապահովման խնդիրների լուծման գործընթացն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

Կատարել ուսումնասիրություններ, նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և մինչև 2020թ. փետրվարի 20-ը ներկայացնել մարզպետի և շահառու ընտանիքների միջև կնքվող պայմանագրերը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 21
ք.Վանաձոր